

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարը ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում անցկացրեց մարզային զարգացման ծրագրերի կազման խնդիրներին նվիրված քննարկում

12.12.2016



Այսօր ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոբյանն աշխատանքային այցով ՀՀ Վայոց ձորի մարզում էր: Նախարար Լոբյանը ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի հետ համատեղ կազմակերպեց քննարկում, որին մասնակցում էին մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանը, մարզպետի խորհրդականը, մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետը, Եղեգնաձոր, Վայք, Ջառիթափ, Վերնաշեն, Գետափ, Ռինդ համայնքների ղեկավարները, մասնավոր ձեռնարկությունների` <<Գինետուն>>, <<Գուլդեն Գոութ>>, <<Եղեգնաձորի պահածոների գործարան>> ՍՊԸ-ների տնօրենները, ֆերմերներ, ուսանողներ :

Նախարարը նշեց, որ գրույցի միջոցով ցանկանում է պատկերացում ստանալ համայնքների զարգացման ծրագրերի կազման մեթոդաբանության մասին, ճշտել համայնքային կարևորագույն կարիքների լուծման համար առաջարկվելիք ուղիների գործնականությունը , ինչպես նաև մասնավոր ձեռնարկատիրության զարգացմանն ու ընդլայնմանն ուղղված խնդիրների լուծման հնարավորությունները: Դ. Լոբյանն իր խոսքում կարևորեց օպտիմալացման և համայնքային բյուջեների ավելացման արդյունքում համայնքներում տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման համար ներդրումների հնարավորության ստեղծումը, նշելով` որքան մեծ լինի համայնքների կողմից ներդրումները, այնքանով կավելանան ծրագրերի իրականացման համար տրվելիք վարկերն ու դրամաշնորհները:

Նախարարը լսեց ներկայացվող ծրագրերը և մեկ առ մեկ քննարկեց բոլոր ծրագրերը: